ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

22.09.2022թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 10.01.2022թ. N 12-Ա որոշումը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ Ալիկ Սահակյանի (հանձնաժողովի նախագահ), ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի գլխավոր մասնագետ Անուշ Խաչատրյանի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ Լուսինե Պապյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Էդգար Հախվերդյանի, քաղաքաշինության վարչության ավագ մասնագետ Արման Մխիթարյանի, բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Խառատյանի, առողջապահության բաժնի պետ Լուսինե Վարդանյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Արմեն Հակոբյանի, տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Վահրամ Դանիելյանի, կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի, քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի պետ Լևոն Հախինյանի, սոցիալական ապահովության բաժնի ավագ մասնագետ Գայանե Բոջուկյանի, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ Անի Ղազարյանի, զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Անի Բաղդասարյանի, գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Գասպարյանի, մշակույթի և սպորտի բաժնի ավագ մասնագետներ Ռուբեն Մխիթարյանի և Մանուշակ Քոչարյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, ֆինանսների, հողօգտագործման, կոմունալ տնտեսության, պաշտպանության, սոցիալական պաշտպանության, առողջապահության, տրանսպորտի, քաղաքաշինության, շրջակա միջավայրի պահպանության, առևտրի և ծառայությունների, գյուղատնտեսության, անասանաբուժության և բուսասանիտարիայի, զբոսաշրջության, կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 8 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

_____

_____

_____

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Սպիտակ համայնքի ղեկավարին:

Ալիկ Սահակյան _____

Անուշ Խաչատրյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Լուսինե Պապյան _____

Էդգար Հախվերդյան _____

Լևոն Հախինյան _____

Արման Մխիթարյան _____

Արմեն Հակոբյան _____

Լուսինե Վարդանյան _____

Գայանե Բոջուկյան _____

Անի Ղազարյան _____

Սամվել Խառատյան _____

Արմեն Գասպարյան _____

Վահրամ Դանիելյան _____

Անի Բաղդասարյան _____

Անահիտ Բարոյան _____

Ռուբեն Մխիթարյան _____

Մանուշակ Քոչարյան _____

Համայնքի ղեկավար՝

Քաջայր Նիկողոսյան _____